ՊԱՏՄԱԲԱՆԱԿԱՆ

ԱՐԾՐՈՒՆԻ ՍԱՀԱԿՅԱՆ

ՍԵԲԻՈՍԱԿԱՆՔ

Կառուցվածքը

Մատենադարանցի դոկտոր Խ. Թորոսյանի՝
Մխիթար Գոշ եւ Սեբիոս վարդապետների
հոգիներով օծուն հիշատակին:

Առաջին իսկ հայացքից աչքի է զարնում Սեբիոսի Պատմության մեջ եղած հատվածներից ամենահինքնուրույն, բացարձակ սկսվածքային բնույթ ու ընդհանրական վերնագիր («Մատեան Ժամանակեան...») ունեցող մասը, որն ընդգրկում է Ժ.-ԽՋ. գլուխները (էջ 72-161): Սա կարելի է համարել «Պատմության» միջուկը կամ ճարտարապետական լեզվով ասած՝ շենքի սկզբնական նախագիծը: Այն ժամանակագրորեն սկսվում է Խոսրով Պառվեզի պառակտումից եւ շարունակվում մինչեւ Հազկերտ Բ-ի ժամանակ եղած եկեղեցական ժողովը (648-649թ.): Ծավալով ու բովանդակությամբ գողտրիկ այս պատմական շարադրանքն ավարտվել է հայոց եկեղեցական ժողովի ընդունած նամակով, որը սակայն հասցեատիրոջը (Կ. Պոլիս) չի ուղարկվել՝ ըստ ընդունված կարծիքի: Հետագայում հեղինակը, իրեն հայտնի պատճառով, գուցե հայոց իշխանի կամ կաթողիկոսի ուշադրությանը ներկայացնելու նպատակով, ի հավելումն սկզբնական մտահաղացման, ստեղծել է առաջին կցակառույցը՝ երկի սկզբից ավելացնելով մի թռուցիկ նախապատմություն եւ բովանդակային ցանկ (գլ. Է.-Թ.): Մինչեւ իր բուն շարադրանքին հասնելը հեղինակը, կարծես շարունակելով Խորենացուն, սկսում է Արշակունիների անկումից («Եւ եղեւ ի նուազիլ ժամանակաց տէրութեանն Արշակունեաց ի Հայաստան աշխարհի, ի բառնալ տէրութեանն Վռամշապուհ արքայի» (գլ. Է.), հիշատակվում է «նախանձաւորն Աստուծոյ նահապետն Մամիկոնէից տանն Կարմիրն կոչեցեալ Վարդան» - որպես ի վերուստ նահատակի պսակ ընդունողի, եւ նրա «Պատմությունը» (Եղիշեի, ոչ թե Ղազար Փարպեցու, որին ծանոթ չէ Սեբիոսը), ապա հիշում է Վահան Մամիկոնյանին՝ որպես պարսիկներին հալածողի եւ իշխանությունը գրավողի, նրա եղբորը՝ Վարդ Պատրիկին՝ իբրեւ հաջորդի, եւ պարսիկ մարզպաններին մինչեւ Սուրեն եւ նրա ընդդիմադիր Վարդան Մամիկոնյան,

«յորոյ վերայ եկն ինքն արքայն Պարսից կոչեցեալ Անուշրոռուան Խոսրով», որ եւ «հաւատաց ի Քրիստոս» (գլ. Ը.-Թ.), ապա Սուրենի հաջորդ մարզպան–սահմանակալները մինչեւ Զ. դ. վերջ՝ Խոսրով եւ Մորիկ թագավորները, այսինքն՝ բուն Պատմության սկիզբը: Կցակառույցի սկզբում դրված բովանդակային ցանկը (գլ. Է.) ճշգրիտ համապատասխանում է բուն «Պատմության» նյութին ու ծավալին (գլ. ԽԵ.):

Նախկին տպավորությունը, թե հիշատակարանային առաջաբանը (խոստաբանություն կոչված) գրված է աշխատանքի վերջում, այստեղ հաստատվեց:

Սասանյանների անկման (652) եւ արաբական գերտերության առաջացման փաստերն արձանագրողը միայն կարող էր Դանիելի տեսիլը մեկնաբանել իր ժամանակի եւ մոտալուտ գալիքի տեսակետից՝ արաբների հայտնվելը գնահատելով որպես վերջին աղետանշան:

Փաստորեն, որպես միասնական շարադրանք՝ Սեբիոսի Պատմությունն աչքի է ընկնում երկու ծրագրային առաջաբաններով: Առաջին առաջաբանի մտահղացումն ու հավելումը եղել է վերջում, իսկ երկրորդը գրվել է ավելի շուտ՝ որպես պատմության բովանդակային ցանկ: Այսինքն, ըստ այդ սկզբնական ծրագրի, Պատմությունն ընդգրկել է հիշյալ ծրագրային առաջաբանը, Ե.-Զ. դարերի եւ հինգ թագավորների պատմությունը՝ մինչեւ բովանդակային ցանկի վերջին նշումը, այն է՝ արաբների նվաճումները (640-ական թթ.): Հեղինակն իր երկն սկսել է գրել 640-ական թթ. վերջին՝ մոտ 50 տարվա պատմությունը ներկայացնելով հանգամանորեն, իսկ դրանից առաջ եղածը, իբրեւ առաջին կցակառույց, այն է՝ հայ Արշակունիների անկմանը հաջորդող դեպքերը (Ե. դ. II կես եւ Զ. դ.), հիշատակել է թռուցիկ՝ երբեմն էլ զանց առնելով եւ հղելով ուրիշների կողմից գրվածը (օր.՝ Եղիշեի «Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին» երկը): Եւ չնայած նշված դարերը հեղինակի կողմից նկարագրվել են անհամաչափ, կարելի է ասել, որ նրա սկզբնական «Պատմությունը» առաջին կառուցվածքով հանդերձ կոչված էր շարունակելու Մովսես Խորենացու «Հայոց Պատմությունը» մինչեւ իր օրերը՝ ընդգրկելով ավելի քան 200 տարվա ժամանակաշրջան (ներկա հրատարակությամբ՝ գլ. Է.-ԽԶ., էջ 64-139): Ե.-Զ. դարերի անցքերը պատմության մեջ ոչ միայն թռուցիկ են, այլեւ անստույգ. միջկրոնական մրցակցային ոգին սնող առասպելապատում զրույցներով համեմված (հմմ. Խոսրով Անուշիրվանի քրիստոնեացումը, էջ 69-70): Երեւում է, որ հեղինակի գլխավոր տեղեկատվական աղբյուրը եղել է ժողովրդաքրիստոնեական ավանդույթը, ավելի ստույգ՝ վանական բանահյուսությունը եւ ոչ թե ստուգապատում որեւէ գրվածք: Իզուր չէ, որ հեղինակը նման աղբյուր չունենալու պատճառով չգիտի պարսից Վաղարշ թագավորի անունը եւ Պերոզի հաջորդ է դնում մի դեպքում՝ Կավատին (գլ. Ը.), մի այլ դեպքում՝ Ջամասպին, հետո՝ Կավատին (գլ. Զ.):

Ի դեպ, հեղինակն առանձնապես աղբյուրագիտական հակումներ չունի եւ չի կարեւորում դրանց վկայակոչումը, միայն սկզբնական պատմության ավարտին, երբ, ըստ բովանդակային ցանկի վերջին կետի, ներկայացնում է արաբների նվաճման սահմանները, նշում է. «Զայս լուաք յարանց գերելոց ի Խուժաստան՝ Տաճկաստանէ,

որոց ինքեանք իսկ ականատես եղեալ պատմեցին մեզ զայս բան» (գլ. ԽԲ., էջ 139)[1]: Իրոք, ոչ միայն տվյալ հատվածի, այլեւ հեղինակի կյանքի ժամանակի մյուս 50 տարիների պատմության գլխավոր աղբյուրը եւս մնում է ինքը՝ բոլոր իր ականատես լրատուներով: Միայն մի հատված կա, որը ենթադրվում է, որ մեջբերված է մի այլ գրավոր աղբյուրից: Դա Հայաստան ուղարկված պարսիկ զորավար-մարզպան-սահմանակալ կոչվածների ցանկն է, որը հանկարծահաս հաջորդում է Խոսրովի մահվան եւ Որմզդի գահակալման մասին տեղեկությանը (էջ 70-71). «Եւ արդ, այս են զաւրավարք արքային Պարսից, որ եկին մի ըստ միոջէ յերկիրս Հայոց... մինչեւ ցայսաւր ժամանակի» (էջ 70): Հեղինակային ներկայության այս ժամանակակետը ցանկի վերջում որոշարկվում է. «Ապա եկին սահմանակալք պարսիկք մինչեւ ցսպառումն խաղաղութեանն, որ ի մէջ Պարսից եւ Յունաց եւ ի մէջ թագաւորացն երկոցունց Մաւրկայ եւ Խոսրովայ», այսինքն՝ մինչեւ մոտ 604-605 թվականները: Եւ քանի որ մեր հեղինակի «ներկայության» ժամանակակետը 640 թվականից հետո է ընկած, Պ. Անանյանը ենթադրել է, որ նա այդ ցանկը փոխառել է դարասկզբին գրած այլ հեղինակից: Չպետք է, սակայն, բացառել, որ այդ այլ հեղինակը կարող էր լինել հենց ինքը՝ բուն հեղինակը, որը դարասկզբին կազմած իր ցանկն օգտագործել է բառացի մեջբերմամբ, դրա համար էլ թվում է գլ. Թ.-ին արհեստականորեն կցված: Չէ որ ականատես պատմիչ լինել չի նշանակում ամեն ինչ շարադրել... հիշողությամբ. նա օգտագործում է նաեւ իր իսկ գրառումները՝ կատարված դեպքերի թարմ տպավորությամբ:

Ինչեւէ, սկզբնական ծրագրով նախատեսված պատմագրական շարադրանքն ավարտվում է դավանաբանական թղթով եւ կազմում է մի ոչ մեծ ծավալ, ճիշտ եւ ճիշտ համապատասխան այն բնորոշմանը, որ տրված է երկի առաջաբանում. «...զայս ամենայն կամեցայ ի ձեռն գրոյս այսորիկ կարճառաւտիւ ձեզ վիպասանել» (գլ. Է., էջ 66): Հիշենք, որ կարճառոտ վիպասանելու ժամանակաշրջանը եւ նյութը հիմնականում վերաբերում են Խոսրով եւ Հերակլ գահակալներին: Առաջինի անունը հատուկ նշվում է Ժ. գլխի նախաբանում. «Վէպ... յԱպրուէզն Խոսրովեան... ի կործանիչն Խոսրով» եւ նրա ժամանակը ներկայացվում է էջ 75-127-ում, իսկ Հերակլ անունը հատուկ նշվում է երկի վերնագրում. «Պատմութիւն ի Հերակլն», իսկ նրա ժամանակը ներկայացվում է 112-138 էջերում:

Ինչպես երեւաց, «Պատմության» սկզբնական ծրագրով գիրքն ավարտվել է Հերակլի թոռ Կոնստասի (641-668) եւ արաբների միջեւ կնքված հաշտության պայմանագրով (649 թ.), որից օգտվելով՝ կայսրը դավանաբանական նոր պահանջ է ներկայացնում Հայաստանին, որի առիթով էլ Հայոց իշխան Թեոդորոս Ռշտունին եւ կաթողիկոս Ներսես Իշխանցին Դվինում հրավիրում են եկեղեցական ժողով եւ կազմում պատասխան դավանաբանական թուղթ՝ նիկիական հանգանակով, որ բերված է ամբողջովին Պատմության ԽՁ. գլխում: Ի դեպ, այդ գլխի սկզբում կատարվել է հետագա գրչի ընդմիջարկում՝ ուղղված ընթերցողին, որը ներառվել է բնագրի կազմում. «Աղա-

1 Ի դեպ, ԽԲ. գլխի վերնագրի առաջին տողը չի համապատասխանում բովանդակությանը:

չեմ զբեզ, ընթերցիր՝ որ զքրիստոնէական հաւատն ունիս, աստուածասէր» (էջ 148): Այսպիսով՝ գրքի նախնական ծրագիրը կատարվեց, բայց գիրքը չավարտվեց:

Հետագա տարիների ցնցող իրադարձությունները տարիներ անց ստիպում են հեղինակին նորից գրիչ վերցնել եւ շարունակել՝ ավելի հաստատելով իր ունեցած կատարածաբանական դիտարկումները՝ հատկապես խորհրդանշական համարելով Հազկերտի մահը եւ Սասանյանների անկումը (652 թ.): Նոր շարունակությունն սկսվում է այսպես. «Ճառեցից դարձեալ զրուցելով զբանս՝ ըստ չարիս հասելոյ ի վերայ մեր ժամանակի, վասն պատառման առագաստին հին հաւատոյ եւ շնչել ի մեզ մահաբեր խորշակին...» (էջ 161-62), կարծես «մատնելով» հեղինակային ավելի քան տասնամյա երկար դադարը՝ նոր սկիզբ ազդարարելով (գլ. ԽԷ.): Այսինքն՝ մոտ 661-62 թթ. հեղինակը շարադրում է անցած տասնամյակի դեպքերն ու անցքերը՝ արաբա-բյուզանդական դաշինքի լուծումից ու հայ-արաբական դաշինքի կնքումից մինչեւ արաբական ցեղերի պառակտումը եւ Օմայան դինաստիայի հաստատումը՝ սկսելով ու ավարտելով «չորրորդ գազանի» հայտնության նշանների արձանագրումով (գլ. ԽԷ.-ԾԲ.):

Նշենք, որ չորս գազանների տեսությամբ էր ուղեկցվել նաեւ առաջին ծրագրի ավարտը (գլ. ԽԴ.): Չորրորդ գազանը, սակայն, գրքի շարունակությունը կազմող հավելյալ հինգ գլուխների միակ պատճառաբանումը չէ, որովհետեւ պատմության գիրքը, ըստ շարունակության, աճում է նաեւ սկզբից: Ահա վերջից ու սկզբից հավելելու այս նոր ծրագիրը պետք է ունենար նաեւ մի քաղաքական դրդապատճառ եւ մի պատվիրատու, որը սկզբնական ծրագրի հետ կապ չի ունեցել: Այդ քաղաքական պատվերն ու պատվիրատուին, բնականաբար, պետք է փնտրել հավելումը գրելու կամ երկրորդ կցակառույցը ստեղծելու ժամանակ:

Երկի վերջում Թեոդորոս Ռշտունու մահից հետո հայոց իշխան է նշանակվում նրա փեսա Համազասպ Մամիկոնյանը, որը բյուզանդամետ քաղաքական գիծ էր վարում, եւ որի օրոք Հայաստան է վերադառնում վեցամյա հալածանքից հետո կաթողիկոս Ներսեսը՝ դարձյալ Մամիկոնյան տոհմից, եւ ավարտին հասցնում Զվարթնոցի շինարարությունը: Համազասպ Մամիկոնյանը բյուզանդական արքունիքում ստանում է կյուրոպաղատի պատիվ եւ արծաթե գահ: Իսկ Մուշեղ Մամիկոնյանը ձերբակալվում է անձնական պատճառով՝ արաբական կողմնորոշում ունենալու համար: Հեղինակը Համազասպի մասին գրում է անթաքույց համակրանքով՝ հիշատակելով նաեւ նրա հորը՝ Դավթին. «...այր առաքինի յամենայն դէմս, բայց ընդամենեսուն եւ ընթերցասէր եւ ուսումնասէր», բայց ոչ զինավարժ ու պատերազմող:

Եթե հաշվի առնենք, որ հեղինակը նույնացվում է Բագրեւանդի եպիսկոպոս Սեբիոսի հետ, իսկ Բագրեւանդը դեռեւս Ե. դարից, իբրեւ ժառանգություն, Սահակ Պարթեւից անցել էր Մամիկոնյաններին, ուրեմն հեշտ է նկատել, որ հեղինակը եւս Մամիկոնյաններից էր, ոչ թե Բագրատունիներից, ինչպես սխալմամբ ենթադրվել է Ն. Ակինյանի, Գ. Աբգարյանի կամ այլոց կողմից, հակառակ Վ. Լանգլուայի ճիշտ

կարծիքի[2]: Բայց առայժմ դա չհամարենք որոշիչ փաստարկ: Հեղինակն իր գաղափարա-քաղաքական հայացքներով մերձենալով Հայոց իշխանին եւ կաթողիկոսին՝ նրանց ուշադրությանը կարող էր ներկայացնել իր «Պատմությունը» եւ նրանցից, հատկապես իշխանից, ստանալ գործը սկզբից եւ վերջից լրացնելու, այն է՝ նախնյաց պատմությունը եւս ավելացնելու եւ արդի պատմությունը մինչեւ վերջ, մինչեւ իրենց ներկան շարունակելու պատվերը:

Որն էր պատվերի էությունը, որը չէր հակասում հեղինակի «վախճանաբանական» տեսությանը, հնարավորություն էր տալիս հաստատելու գալիքը եւ լրացնելու անցած դարերի առաջին «գազանների» մեկնությամբ, ուստի եւ ընդունելի էր:

Բանն այն է, որ, սկսած Ե. դարից, Մամիկոնյանները, որպես Սահակ Պարթեւի թոռներ, հավակնել են ժառանգելու կաթողիկոսական աթոռը եւ վերականգնելու թագավորական գահը Հայաստանում: Նրանց քաղաքական նպատակների ամենաուրջ հակառակորդները եղել են Բագրատունիները, որոնք նույնպես հայկական գահի հավակնորդ էին: Մամիկոնյանների կաթողիկոսական հավակնությունները թեեւ իրավաբանորեն չընդունվեցին, բայց գործնականորեն նրանք էին կարողանում ամենաշատը անցկացնել իրենց թեկնածուներին՝ Գյուտ Արահեզացուց մինչեւ Ներսես Իշխանցի, այն չափով, որ «Մամիկոնյան» կաթողիկոսները ավելի շատ էին հաջորդում իրար, քան մնացած բոլորը միասին: Կարելի է ասել, որ Ե. դ. երկրորդ կեսից մինչեւ Է. դ. վերջերը հայկական հասարակական կարծիքում նույնացման աստիճանի մոտեցել էին իրար Հայ Եկեղեցու եւ Մամիկոնյանների նախարարական մեծ տոհմի շահերը: Պատահական չէ, որ Մամիկոնյաններն իրենց ակտիվ քաղաքական միտումներին ի նպաստ հովանավորում էին հոգեւոր-մշակութային շատ ծրագրեր, պատվիրում էին պատմագրական երկեր: Հինգերորդ դարում ստեղծված պատմագրական ժառանգության համար պարտական ենք նրանց «քաղաքական» պատվերին: Միակ «այլընտրանքային» պատմությունը գրվել է Մովսես Խորենացու կողմից՝ Սահակ Բագրատունու պատվերով: Մնացածը՝ Ագաթանգեղոս, Կորյուն, Եղիշե, Փավստոս Բուզանդ, Ղազար Փարպեցի, պաշտպանում են Մամիկոնյանների հասարակական-քաղաքական շահերը:

Է. դարի երկրորդ կեսին Մամիկոնյանները նորից լցվեցին քաղաքական լավատեսությամբ: Իրանական պետությունը կործանվեց, արաբական պառակտումները նրանց ետ պահեցին Հայաստանից, Բյուզանդիան, տիրելով Հայաստանին, վավերացրեց հայոց իշխանի իրավունքները հատուկ տիտղոսով եւ կյուրոպաղատ նշանակեց Համազասպ Մամիկոնյանին: Վերջինս, լինելով «ինտելեկտուալ» քաղաքական դեմք, վերակոչեց նախնյաց քաղաքական «երազը»՝ հույս տածելով Բյուզանդական զենքի եւ շահերի ուժով վերականգնել Հայոց թագավորական գահը եւ դառնալ թագավոր:

2 Տե՛ս **Victor Langlois**, Le Pseudo-Agatange..., t. 1, Paris, 1867, էջ 195: Գ. Աբգարյանը Վ. Լանգլուայի արտահայտած կարծիքի մասին գրում է. «Հայտնի չէ, թե ինչ հիմունքներով Սեբեոսը համարված է Մամիկոնյան տոհմի եպիսկոպոս», տե՛ս «Սեբեոսի Պատմություն», էջ 24:

Դրա համար, ի շարս այլ պարագաների, նաեւ հարկավոր էր մի նոր «Պատմություն» համոզիչ կերպով ցույց տալու համար, որ Մամիկոնյանների տոհմը սերում է ճենաց թագավորական ընտանիքից, եւ որ նրանք Հայքում օժտված են եղել սպարապետական իշխանությամբ՝ ժառանգաբար, դեռեւս Տրդատ Մեծի հայր Խոսրովի ժամանակից: Այսինքն՝ Մամիկոնյանների հավակնությունը խարսխված է ոչ հայկական թագավորական ծագման եւ հայկական անուրանալի վաստակի հիմքերի վրա: Դեռ ավելին, այդ «Պատմության» մեջ պետք էր նաեւ ցույց տալ, որ Բագրատունիները, դարձյալ անուրանալի հայկական վաստակի դիմաց, ունեն ընդամենը տեղական, ուստի եւ ոչ թագավորական ծագում: Ահա՛ պատվերի էությունը, որն իրագործելու համար հնարավոր չէր լինելու վերաշարադրել նախնյաց «անստորագրեալ» պատմությունն առանց աղբյուրաբանական կեղծիքներ անելու: Մնում էր միայն այդ կեղծիքները հնարավորին չափ քողարկել կամ ճշմարտանման անել: Փորձենք քննել:

Հեղինակը, պատվերի համաձայն, իր «Պատմությանը» սկզբից ավելացնում է Հայկի եւ Բելի պատերազմը, Հայոց լեռնաշխարհի բնակեցումն ու շենացումը Հայկի սերունդներով մինչեւ Փառնավազ, որի ժառանգներից Բագարատը հիմնադրեց Բագրատունյաց նախարարական տունը. «Եւ որդիքն Բագարատայ ժառանգեցին զժառանգութիւնս իւրեանց ի կողմանս արեւմտից, այս ինքն է Անգեղ տուն, վասն զի կոչեցաւ Բագարատ, եւ Անգեղ, զոր ի ժամանակին յայնմիկ ազգ բարբարոսացն աստուած կոչեցին» (էջ 51): Փառնավազի օրոք Հայքին տիրում է Բաբելոնը, հետո Մարաստանը՝ մինչեւ Մակեդոնացի, որից հետո էլ պարթեւները, որոնք մինչեւ Սասանյան հեղաշրջումը Սեբիոսի Պատմության մեջ ներկայանում են ընդամենն իրենց ծավալուն իշխանությունը հաստատելու, Հայաստանում կրտսեր թագավորություն հիմնելու պատմությամբ եւ արքայացանկերով: Իսկ արքայացանկին հաջորդում է Մամիկոնյանների տոհմաբանությունը, որի շարունակությունն էլ կազմում են երկու ժամանակագրական կանոններ, առաջինը՝ հայոց, պարսից (Սասանյան) եւ հունաց թագավորների գահակալների համադրումով մինչեւ հայ Արշակունիների վախճանը, երկրորդը՝ պարսից եւ հունաց թագավորների տարիների համադրումով՝ մինչեւ Սասանյանների վախճանը: Ի դեպ, այս երկակի ցանկն էլ իր հերթին է վկայում, որ ողջ հավելումն արվել է վերջում, 652 թվից հետո: Վերջապես, սկզբի եւ վերջի բոլոր հավելումները պսակվում են մի նոր ծրագրային առաջաբանով (գլ. Ա.), որը դառնում է վերամշակված ողջ գրքի սկիզբը, պարունակում է թե՛ բովանդակային սահմանների հակիրճ նշումներ, թե՛ աղբյուրաբանական տեղեկություններ ու նրանց ձեռքբերման հանգամանքների «կեղծ» վկայակոչումներ:

Այսպիսի թռիչքային անցումը սկզբից մինչեւ բուն պատմությունը, բնական է, պետք է ուղեկցվեր ոչ թե պատմագրական սյուժեներով, այլ սոսկ անունների թվարկումներով: Պարզ երեւում է, որ նման թռուցիկ «նախապատմության» նպատակը երկու տոհմաբանական սյուժեների շեշտադրումն է, որով թագավորական պսակի հավակնորդներից մերժում է Բագրատունիներին, պաշտպանում է Մամիկոնյաններին: Հայագետներից նրանք, ովքեր կարծել են, թե հեղինակի համակրանքը Բագրա-

տունիների կողմն է, որովհետեւ նա, ի տարբերություն Մովսես Խորենացու, Բագրատունիներին հայկական ծագում է վերագրում, իրենց արդիական պատկերացումները շփոթել են միջնադարյան աշխարհընկալման հետ: Իրականում, թե՛ մեր հեղինակը, թե՛ Մովսես Խորենացին, թե՛ նախարարներն ու հասարակ ժողովուրդը վաղ միջնադարյան հասարակարգում այլ հայացք են ունեցել թագավորական իշխանության հարցում. թագավորը պետք է ունենա թագավորական ծագում, որպեսզի լինի օրինական:

Ահա թե ինչպես են Բագրատունիները գովաբանվելու քողի տակ զրկվում թագավորանալու իրավունքից. «Սմա (Արշակին) ընդ առաջ Բագարատն Փառազեան, յորդւոցն Արամենակայ, նախարար մեծ հանդերձ զաւրու մատուցանէ նմա պատարագ ոսկի եւ արծաթ... պսակէ զնա ի թագ հայրենի... եւ տայ նմա զդուստր իւր ի կնութեան: Զսա արար Արշակ արքայ ասպետ Հայաստան երկրին, որ էր իշխան եւ հրամանատար ... եւ հայր արքայի, եւ եղբայր, որում էր իշխանութիւն տերութեանն այնորիկ» (էջ 54): Դեռ ավելին, հեղինակը, հակաճառելով Խորենացուն, հերքում է նաեւ այն թագավորի գոյությունը, որի օրոք Բագրատունիները մուտք են գործել Հայաստան: Այսինքն՝ ոչ թե Պարթեւ Արշակ Մեծը թագավորեցնում է Հայքում իր կրտսեր եղբայր Վաղարշակին, ինչպես Մովսես Խորենացին պատմում է ըստ Մար Աբա Կատինայի, այլ պարթեւ Արշակ Առաջինը Հայքում թագավորեցնում է իր որդի Արշակ Փոքրին, ինչպես հեղինակ Սեբիոսը պատմում է ըստ Մարաբա Մծուրնացու, որը թեեւ Խորենացու նույն Կատինան է, սակայն տեղեկատվությամբ տարբեր է: Բայց որպեսզի այդ տարբերությունը համոզիչ լինի, նա վկայակոչում է Տրդատի հրամանով արված ագաթանգեղյան արձանագրությունը արքունի պալատի սյուներից մեկի վրա: Հետեւաբար, ստացվում է, որ չի եղել ոչ միայն եկամուտ հրեածին թագավորական տոհմ, այլեւ չի եղել Հայքում նրանց ընդառաջող Վաղարշակ թագավոր: Ահա թե որն է հայ եւ պարթեւ Արշակունի արքայացանկերի քողարկված նպատակը կեղծ ագաթանգեղյան վիմագրում. Բագրատունիները հայկական տոհմերից ամենափառավորն են, բայց հայկազն են, ունեն տեղական ծագում:

Իսկ ինչո՞ւ են արքայացանկերը հասցված մինչեւ վերջ, եթե փոփոխությունը արվում է ցանկի սկզբում: Այստեղ էլ ընկած է երկրորդ շեշտադրումը. որպեսզի պարթեւ վերջին թագավոր Արտավանի երաշխավորմամբ Հայքի թագավոր Խոսրովը դիմավորի Մամիկոնյանների եկամուտ նախնիներին՝ նրանց նախարարական տուն կարգելով եւ սպարապետի պաշտոն տալով: Այսինքն՝ արքայացանկի վերջը եւ Սասանյան հեղաշրջումն ընդամենը առիթ են Մամիկոնյանների թեման բնագիր մուծելու եւ այդ հարցում եւս եղած այլ կարծիքին հակաճառելու համար:

Ինչ վերաբերում է նոր հրատարակության Գ. գլխին, ապա պետք է կարդալ եւ ընդունել այն, ինչ գրված է նրա սկսվածքում. «Արդ թէ պիտոյ է քեզ, ո՛վ ընթերցաւէր...» (էջ 55): Այսինքն՝ ԺԱ. դ. կամ ավելի ուշ ոմն գրագետ, բանիմաց գրիչ, տեսնելով պարթեւ ու հայ Արշակունիների գահակալների ու անունների միջեւ եղած տարբերությունները Խորենացու եւ Ստեփանոս Ասողիկի համեմատ, արժանի է դիտել ըն-

թերցողին մատուցել նրանց ունեցած ավելի հավաստի եւ ճշմարիտ ցանկը: Ուստի, պետք է այդ գլուխը համարել հետագա ընդմիջարկում եւ դուրս համարել «Պատմության» բնագրից: Ի դեպ, նույն բանիմաց գրչից եկող միջամտություններ պետք է դիտել նաեւ գլ. ԽԶ.-ի սկսվածքի դիմումը ընթերցողին, հայ Արշակունիների անվանացանկի՝ Խոսրովին հաջորդող մասը մինչեւ Պապ (էջ 55), նույն ցանկի սկզբում դրված (առաջին արքա Արշակի մասում) «եղբայր իւրով Վաղարշակաւ» արտահայտությունը (էջ 54) եւ եռաշար արքայացանկի (գլ. Ե.) Հուլիանոս Նզովածի մասին տեղեկությունը՝ Սոկրատ պատմիչի հիշատակությամբ («Սա որդի է քեռ մեծին...», էջ 60, տ. 18-25):

Այսպիսով, պատվիրատուի ծրագրով Սեբիոսը ստեղծել է եւս երկու կցակառույց՝ սկզբից եւ վերջից. նախ հավելել է Ա., Բ., Դ., Ե., Զ. գլուխները, ապա՝ ԽԷ., ԽԸ., ԽԹ., Ծ., ԾԱ., ԾԲ. գլուխները, իսկ ամենավերջում գրել է ընդհանուր ծրագրային առաջաբանը (գլ. Ա.-ի սկիզբը), որով եւ ավարտել է իր «երկպլան» պատմագիրքը:

Ավելորդ չէ, երեւի, հերթականությամբ մեջբերել գրքի նոր կառուցվածքում տեղ գտած բոլոր սկսվածքները՝ ըստ ժամանակային հերթականության.

1. «Մատեան ժամանակեան, պատմութիւն թագաւորական, վէպ արիական... Եւ արդ ասացից զվէպս ի կործանիչն եւ յապականողն Խոսրով յԱստուծոյ անիծեալն» (էջ 72):

2. «Եւ եղեւ ի նուազել ժամանակաց տէրութեանն Արշակունեաց եւ Հայաստան աշխարհի, ի բառնալ տէրութեանն Վռամշապուհ արքայի...» (էջ 64), որը ոճով հիշեցնում է Եղիշեին, որին եւ քիչ անց վկայակոչում է հեղինակը՝ առանց անունը տալու:

3. «Բայց ես նախ առաջին զվէպս յահեղն արքայ եւ յարին այրն սկսայց ասել, նախ զնախնեացն պատմութիւնս, ուստի եղեւ սկիզբն...» (էջ 48):

4. «Ճառեցից դարձեալ զրուցելով զբանս ըստ չարիս հասելոյ ի վերայ մեր ժամանակի...» (էջ 161):

5. «Եւ եղեւ ոչ ի կամայական պիտոյից վարժ խուզակի զանստորագրեալ ժամանակ եւ զնախնի քաջացն ձեռնարկելով դրոշմել վիպասանութիւնս...» (էջ 47):

Համադրումից հեշտ է նկատել, որ իսկական սկսվածքին հատուկ բացարձակ ինքնուրույնությամբ օժտված է միայն առաջին սկիզբը, մնացած չորսը կրում են ինչ-որ հոգեբանական բեռնվածք, ինչ-որ ներքին «երկխոսության» հետք, որ եւ բնական է ու հասկանալի վերոբերյալ վերլուծության լույսի ներքո: Կարելի է կարծել, որ գրքի երկպլան կառուցվածքը (բուն պատմություն+կցակառույցներ) նույնպես պատճառ է դարձել սեբիոսագիտական որոշ թյուրընկալումների:

Արդ, մեզ հասած «Պատմության» բնագիրը բաժանենք կցակառույց հատվածների.

1. Հիշատակարան (խոստաբանութիւն) - գլուխ Ա. (էջ 47):

2. Նախնական պատմություն եւ ժամանակագրական ցանկեր - գլուխ Ա. (էջ 48) - գլ. Զ.:

3. Բովանդակային ցանկ եւ կարճ նախապատմություն- գլ. Է.-Թ.:

4. Բուն պատմություն- էջ 72, գլ. Ժ. - գլ. ԽԶ.:

5. Վերջնամաս՝ ավարտաբանություն - գլ. ԽԷ. - ԾԲ.:

Այժմ, եթե հիշյալ հատվածները դասավորենք ըստ գրման ժամանակի, կստանանք հետեւյալ հերթականությունը. 4, 3, 2, 5, 1:

1-ը գրվել է ամենավերջում, որովհետեւ «Պատմության» վերջնական խմբագրության ամփոփիչ սկսվածքն է եւ ազդարարում է հետագա ասելիքի մասին: 5-ը եւ 2-ը գրվել են նույն պատվերի արդյունքում, բայց 5-ը նախավերջինն է, որովհետեւ նրա մեջ գործածված է մի այլաբանություն (կորովի այր-նետաձիգ), որը բխեցված է 2-ում ներկայացվող Հայկ Նահապետի կերպարից: 4-ը բուն պատմությունն է, որ գրվել է ամենասկզբում. իսկ 3-ը նրա բովանդակային ցանկն է ու անմիջական նախապատմությունը, որ կցվել է բուն պատմությանը ոչ թե պատվերով, այլ հեղինակային նպատակադրմամբ[3]:

Երբ արդեն որոշակի ուրվագծվեց բնագրի ստեղծման պատմությունը, եւ հասկանալի դարձավ նրա կառուցվածքը, ակամայից հիշում ես ներհուն գրագետ Ն. Աղբալյանին, որ օժտված էր գրական երկի կառուցվածքի գերզգայուն ընկալմամբ, եւ որ Սեբիոսին ճանաչում էր իբրեւ ամբողջ երկի հեղինակ: Նա սույն խնդրի հետ կապ չունեցող մի առիթով (մեկնաբանելով Սեբիոսի «մինչեւ ցայսաւր ժամանակի» արտահայտությունը) եզրակացրել է, որ հեղինակն իր «Պատմությունը» գրել է ընդհատումներով՝ սկսելով 604-608 թվականներին[4]: Այժմ կարող ենք ասել, որ ընդհատումները վերաբերում են եւ՛ կառուցվածքին, եւ՛ գրման ժամանակին. առաջին մասը ավարտել է 649-50 թթ., երկրորդը՝ 660-61 թթ.:

3 Դրա համար էլ ավելորդ է քննարկել, թե ինչու հեղինակը 3-րդում, բուն պատմության բովանդակային ցանկը ներկայացնելով, չի հիշատակում 4-րդի վերջում բերված դավանաբանական թուղթը (գլ. ԽՋ):

4 Ն. Աղբալյան, Պատմութիւն հայոց գրականութեան, հատ. 4, Պեյրութ, 1970, էջ 448: